Պայմանագիր No 90

ք.Երևան 03/02/2020թ.

«Բելարթմի» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Բելույանի, գործելով ընկերության կանոնադրության, ՀՀ մաքսային օրենսդրության հիման վրա, հետայսու «Կատարող» մի կողմից, և « ՀԱՅԱՏՈՄ » ՓԲԸ -ն ի դեմս գլխավոր տնօրեն Վ. Պետրոսյան-ի հետայսու՝ «Պատվիրատու», մյուս կողմից, երկուսը միասին «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով «Պատվիրատու»-ն հանձնարարում, իսկ «Կատարող»-ը պարտավորվում է կատարել մաքսային ձևակերպումներ, ինչպես նաև բոլոր մաքսային պահեստներից և «Զվարթնոց»-ի Կարգո բեռնային համալիրից ընդունել և առաքել «Պատվիրատու»-ի բեռները, կատարել ցանկացած տեսակի վճարումներ, բեռնափոխադրողներից ստանալ ձևակերպման ենթակա ապրանքների փաստաթղթերը:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 «Կատարող»-ը պարտավոր է.

2.1.1 Իրականացնել «Պատվիրատու»-ի անունից արտահանվող կամ նրա անունով ստացված բեռների հայտարարագրումը ՀՀ մաքսային մարմիններում:

2.1.2 Սույն պայմանագրի շրջանակներում, «Պատվիրատու»-ի մասին իրեն հայտնի դարձած տեղեկությունները չտարածել կամ չտրամադրել երրորդ անձանց, բացառությամբ «Պատվիրատու»-ի հանձնարարության, համաձայնության, ՀՀ մաքսային մարմինների պահանջով ներկայացման դեպքերի:

2.1.3 Բեռի հայտարարագրման անհնարինության դեպքում, որն ի սկզբանե ակնհայտ է, ելնելով «Պատվիրատու»-ի կողմից տրամադրված տեղեկություններից, փաստաթղթերից, այդ մասին տեղեկացնել «Պատվիրատու»-ին:

2.1.4 «Պատվիրատու»-ին տրամադրել մաքսային ձևակերպումների ընթացքում «Պատվիրատու»-ի անունից կատարված վճարումները (հարկեր, տուրքեր, այլ պարտադիր վճարներ) հավաստող փաստաթղթեր, ինչպես նաև բեռն ուղեկցող և ՀՀ մաքսային սահմանն անցած բոլոր փաստաթղթերի պատճենները, բեռնամաքսային հայտարարագրի բնօրինակը:

2.2 «Կատարող»-ն իրավունք ունի.

2.2.1 «Պատվիրատու»-ից պահանջել, որպեսզի իրեն տրամադրվեն ապրանքի հայտարարագրման հետ կապված հավաստի տեղեկություններ, փաստաթղթեր (դրանց պատճենները):

2.2.2 «Պատվիրատու»-ից պահանջել, որպեսզի ծառայության համար վճարումները կատարվեն ժամանակին:

2.3 «Պատվիրատու»-ն պարտավոր է.

2.3.1 Չխոչնդոտել «Կատարող»-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացքին:

2.3.2 «Կատարող»-ին նախապես, բեռի հայտարարագրումից առաջ, տրամադրել ապրանքների համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթերի բնօրինակներ և պատճեններ:

2.3.3 Նախապես, կանխիկ կամ փոխանցման եղանակով, «Կատարող»-ին տրամադրել դրամական միջոցներ, որոնք անհրաժեշտ են մաքսային ձևակերպումների ընթացքում «Պատվիրատու»-ի անունից հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումները կատարելու համար:

2.4 «Պատվրատու»-ն իրավունք ունի.

2.4.1 «Կատարող»-ից պահանջել, որպեսզի սույն պայմանագրի առարկա հանդիսացող ծառայությունները մատուցվեն պատշաճ և ժամանակին, ընդ որում ժամանակի հաշվարկի սկիզբ է համարվում ՀՀ Մաքսային սահմանով փաստացի հատած բեռի փաստաթղթերն ու այլ տեղեկությունները «Պատվիրատու»-ի կողմից «Կատարող»-ին տրամադրելու պահը բեռներ ներմուծելիս, իսկ բեռի արտահանման դեպքում՝ հայտարարագրման նպատակով պահանջվող բոլոր փաստաթղթերն ու այլ տեղեկությունները «Պատվիրատու»-ի կողմից «Կատարող»-ին տրամադրելու պահը:

2.4.2 «Կատարող»-ից ստանալ բանավոր տեղեկություններ բեռի մաքսային ձևակերպումների ընթացքի վերաբերյալ:

## 3. Պայմանագրի գինը

3.1 «Կատարող»-ի կողմից «Պատվիրատու»-ին մատուցված ծառայությունների գինը կողմերի միջև սահմանվում է «Կատարող»-ի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ ելնելով մատուցվող ծառայությունների ծավալից, բարդության աստիճանից և այլ պայմանագրով չնախատեսված առանձնահատկություններից, որոնք կբխեն տվյալ իրադրությունից կամ օրենքից:

3.2 «Պատվիրատու»-ի ցանկությամբ սահմանված աշխատանքային ժամերից դուրս, ինչպես նաև շաբաթ և կիրակի օրերին իրականացվող մաքսային ձևակերպումների գումարին կատարվում է հավելում պայմանագրային ընդհանուր արժեքի 20%-ի չափով:

3.3 «Պատվիրատու»-ն «Կատարող»-ին, մատուցած ծառայությունների դիմաց, վճարում է կատարում բեռը, օրենքով սահմանված կարգով, մաքսային մարմինների կողմից բացթողման և «Կատարող»-ի կողմից վճարման հաշիվ ներկայացնելու պահից ոչ ուշ, քան 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

## 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 «Կատարող»-ը պատասխանատու է «Պատվիրատու»-ի անունից արտահանվող կամ «Պատվիրատու»-ի անունով ստացվող բեռի մաքսային ձևակերպումները օրենքին համապատասխան կատարելու համար:

4.2 Պայմանագրի 2.3.3 կետի հաշվառմամբ «Կատարող»-ը պատասխանատու է բեռի մաքսային ձևակերպումների ընթացքում «Պատվիրատու»-ի անունից վճարումները (հարկեր, տուրքեր, այլ պարտադիր վճարներ) օրենքով պահանջվող ժամկետում և չափով կատարելու համար:

4.3 «Պատվիրատու»-ն ողջ ծավալով պատասխանատվություն է կրում «Կատարող»-ին, բեռի մաքսային ձևակերպումների նպատակով, տրամադրված փաստաթղթերում ներառված տեղեկությունների հավաստիության համար: Եթե «Պատվիրատու»-ի անունով ստացված կամ նրա անունից արտահանվող փաստացի բեռի և տրամադրված փաստաթղթերի միջև ի հայտ գան բեռի քանակին, արժեքին, անվանումներին վերաբերվող դրական կամ բացասական տարբերություններ կամ այլ անհամապատասխանություններ, ապա «Պատվիրատու»-ն, սխալ տեղեկությունների տրամադրման պատճառով, ՀՀ օրենսդրության համաձայն, կրում է սխալ հայտարարագրման համար նախատեսված նյութական և այլ պատասխանատվություն:

4.4 Ծառայության մատուցման անհնարինության դեպքում, ներառյալ օրենքով սահմանված ժամկետից ուշ ծառայությունը մատուցելը, սույն պայմանագրի 4.3 կետի կամ «Պատվիրատու»-ի կողմից «Կատարող»-ին փաստաթղթերի փաթեթի ոչ լրիվ տրամադրելու, տեղեկությունների թերի լինելու պատճառով ճշտգրտման ենթակա հանգամանքի հետևանքով, ինչպես նաև այն հանգամանքների ուժի, որոնց համար կողմերից որևէ մեկը պատասխանատվություն չի կրում, «Պատվիրատու»-ն «Կատարող»-ին հատուցում է վերջինիս կատարած ծախսերը:

4.5 Ծառայությունը մատուցելիս «Կատարող»-ը որպես հայտարարատու /մաքսային միջնորդ/ հանդես է գալիս «ուղղակի»՝ գործելով ապրանքներ տեղափոխող անձի /«Պատվիրատու»-ի/ անունից և նրա հաշվին: Բեռնային մաքսային հայտարարագիրը՝ որպես իրավաբանական նշանակություն ունեցող փասթաթուղթ, գույքային, իրավական և ցանկացած

այլ առումով իրավունքներ և պարտականություններ է առաջացնում անմիջապես «Պատվիրատու»-ի /մաքսային մարմնում ներկայացողի/ համար: «Կատարող»-ին տրամադրված փաստաթղթերի և/կամ տեղեկությունների, ինչպես նաև հայտարարագրված տեղեկությունների ճշտության համար պատասխանատու է «Պատվիրատու»-ն:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում «Կողմեր»-ի ստորագրման պահից և գործում է մինչև 03.02.2023թ.:

5.2 Պայմանագրի պայմանների փոփոխությունները թույլատրվում են պայմանագրին կից արձանագրությունների միջոցով՝ մինչ այդ «Կողմեր»-ի համաձայնությունը գրավոր ստանալով:

5.3 Պայմանագիրը կարող է չեղյալ համարվել կամ խզվել, որի մասին «Կողմեր»-ից մեկը պետք է գրավոր հայտնի մյուսին մեկ ամիս առաջ:

5.4 Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, հայերեն լեզվով, երկուսն էլ ունեն նույն իրավաբանական ուժը:

5.5 Պայմանագրով չկարգավորված հարցերը, ինչպես նաև «Կողմեր»-ի միջև ծագած տարաձայնությունները կարգավորվում են բանակցությունների միջոցով կամ ՀՀ գործող օրենսդրությամբ:

5.6 «Կողմեր»-ը համաձայնվում են, որ վեճի առաջացման դեպքում գործի վարույթը իրականացվելու է «Կատարող»-ի գործունեության տարածքային դատարանում:

Կողմերի իրավաբանական հասցեները

| «Կատարող» | «Պատվիրատու» |
|---|---|
| «Բելարթմի» ՍՊԸ | « ՀԱՅԱՏՈՄ » ՓԲԸ |
| ք. Երևան, Գլինկայի փ. 2ա, բն.24 | ք. Երևան, Ծովակալ Իսակով 50/12 |
| Հ/Հ 1570022194400100 | ՀՀ 11500682358300 |
| Ամերիաբանկ ՓԲԸ | Հայբիզնեսբանկ ՓԲԸ |
| ՀՎՀՀ 00446366 | ՀՎՀՀ 01804548 |
| Տնօրեն՝ | Գլխավոր Տնօրեն՝ |
| Ա.Բելուլյան _____ | Վ. Պետրոսյան _____ |